ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«05» մայիսի 2014 թ. N 100-Ա/1

## ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 80-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման հավելվածի 106-րդ կետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից հարուցվող վարչական վարույթին առնչվող փաստաթղթերի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի մայիսի 11-ի N 74-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 80-Ա/1 հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) N 5 Ձևում՝

ա. 9-րդ կետից հանել «Բաժնի պետ» բառերը.

բ. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

2) N N 6, 7 և 8 Ձևերում՝

ա. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

3) N 9 Ձևում «Բժշկական վերականգնման ծրագիր» բաժնի 1-ին այունակի՝

ա. 3-րդ տողում «Վերին վերջույթի» բառերը փոխարինել «վերին աջ վերջույթի, վերին ձախ վերջույթի» բառերով, «Ստորին վերջույթի» բառերը փոխարինել «ստորին աջ վերջույթի, ստորին ձախ վերջույթի» բառերով, «ոտնաթաթի» բառը փոխարինել «աջ ոտնաթաթի, ձախ ոտնաթաթի» բառերով, «սրունքի օրթոպրոթեզ» բառերը փոխարինել «աջ սրունքի օրթոպրոթեզ, ձախ սրունքի օրթոպրոթեզ» բառերով, «օրթեզ» բառը փոխարինել «աջ վերին վերջույթի օրթեզ, ձախ վերին վերջույթի օրթեզ, աջ ստորին վերջույթի օրթեզ, ձախ ստորին վերջույթի օրթեզ» բառերով, «ապարատ» բառը փոխարինել «աջ ստորին վերջույթի ապարատ, ձախ ստորին վերջույթի ապարատ (համապատասխան նշում կատարելով)» բառերով.

բ. 3-րդ տողից հանել «օրթեզի» բառը.

գ. 4-րդ տողում «կրծքագեղձի» բառը փոխարինել «աջ կրծքագեղձի, ձախ կրծքագեղձի» բառերով, «աչքի պրոթեզ» բառերը փոխարինել «աջ աչքի պրոթեզ, ձախ աչքի պրոթեզ» բառերով, «լսողական սարքեր» բառերը փոխարինել «աջ ականջի լսողական սարք, ձախ ականջի լսողական սարք» (համապատասխան նշում կատարելով)» բառերով .

4) N 10 Ձևում՝

ա. 21-րդ կետում «Տրված է քաղվածք-տեղեկանք N» բառերը փոխարինել «Տրված է ԲՍՓ որոշման քաղվածք N» բառերով.

բ. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

5) N 12 Ձևում՝

ա. «նրա մահվան պատճառը _____

(գրել տառերով )

_____»

բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Փորձաքննությունը կատարվել է /____/_____201 թ. /____/_____201 թ.»

(սկիզբը) (ավարտը)

բ. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

6) N 15 Ձևում՝

ա. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

7) N 17 Ձևում՝

ա. 20-րդ կետում «Տրված է քաղվածք-տեղեկանք N» բառերը փոխարինել «Տրված է ԲՍՓ որոշման քաղվածք N» բառերով.

բ. «օրվանից» բառից հետո «6» թիվը փոխարինել «2» թվով.

8) N 22 Ձևը ուժը կորցրած ճանաչել:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետին՝

1) մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներում և տարածքային մարմիններում ապահովել Հրամանով հաստատված հավելվածի N 9 ձևի կիրառումը.

2) ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կառուցվածքային ստորաբաժանումում և տարածքային մարմիններում ապահովել Հրամանով հաստատված հավելվածի NN 7 և 15 ձևերի (բժշկասոցիալական փորձաքննական որոշում) կիրառումը մինչև տպագրված ձևաթղթերի սպառումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի համաձայն փոփոխված N N 5, 6, 7, 8, 9, 10, 12, 15, 17 ձևերի տպագրման գործընթացը:

3. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ տնօրենին՝

1) ապահովել սույն հրամանի համաձայն փոփոխված N N 5, 6, 7, 8, 9, 10, 12, 15, 17 ձևերի էլեկտրոնային տարբերակների ներդրումը հաշմանդամների «Փյունիկ» տեղեկատվական շտեմարանում և դրանց հետագա կիրառումը, իսկ N 22 Ձևը հանել:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ